

ՎԱՀԱԳՆԻ ԱՌԱՍՊԵԼԻ ՇՈՒՐՁԸ

Գ. Ա. ՄԱԴՈՅԱՆ

Վահագնի առասպելը դասվում է լավ ուսումնասիրվածների թվին: Ի տարբերություն մյուս աստվածների, Խորենացին բավական տեղեկություններ է հաղորդում Վիրապաքաղ Վահագնի մասին: Պահպանվել է ժողովրդի տված մեկ այլ անվանում ևս, Ասորեստանի թագավոր Բարշամի հետ առնչվող, Հարդազող մականունը: Եվ վերջապես հիշատակելի է դյուցազնի ծնունդը պատկերող երգը, որ ուզած ժողովրդի գրականության զարդը կարող է հանդիսանալ:

Այսքանով Պատմահայրը բավարարվում է՝ անպատասխան թողնելով բազմաթիվ հետաքրքրական հարցեր: Ցավոք, այլ աղբյուրներում հանդիպող մյուս տեղեկությունները ավելի շատ շփոթություն են առաջացնում, քան օգնում ինչ-ինչ խնդիրների պարզաբանմանը: Ուրախալի է, որ առկա նյութի վերլուծության միջոցով հայագետները, մասնավորապես Մանուկ Աբեղյանը, կարողացել են լուսաբանել մի շարք կնճռոտ խնդիրներ: Իսկ այն հանգամանքներում, երբ Խորենացին ընդհանրապես ոչինչ չի հաղորդում, Աբեղյանն ստիպված է եղել դիմելու համեմատական դիցաբանության օգնությանը: Այս անգամ արդեն լուսաբանվել են ընդհանրապես ամպրոպի աստվածներին ընտրող գծերը:

Սակայն կան նաև այնպիսի մանրամասներ, որ հատկանշական չեն ամպրոպի աստծու կերպարն ամբողջացնելու համար, բայց Վահագնին ի մոտ ծանոթանալու համար խիստ անհրաժեշտ են: Օրինակ, ոչ մի նշանակություն չունի, թե քանի եղբայր կամ քույր ունի ամպրոպի աստվածը: Բայց, եթե Վահագնի կապակցությամբ այս հարցին ուշադիր մոտենանք, բոլորովին այլ կերպ կընկալվի Աժդահակի քաջածանոթ երազը, որին կցանկանայինք անդրադառնալ:

Այստեղ վատ չէր լինի հիշել, որ Վահագնը երկու եղբայր ուներ, և որ ինքը ամենակրտսերն էր: Եթե հատուկ ուշադրությամբ կարդանք Աժդահակի երազը, անշուշտ, նոր հանգամանքներ կհայտնաբերենք, որոնք կարող էին վրիպել թուրքիկ ընթերցանության ժամանակ: Տեղին ենք համարում հատվածը քաղել ամբողջությամբ, որպեսզի ընթերցողը առավել հեշտությամբ համոզվի մեր օրինակներում:

«Էր ինձ, ասէ, ո՛վ սիրելիք, լինել յերկրի անծանօթում, մերձ ի լեռան մի երկար յերկրէ բարձրութեամբ, որոյ զազաթնն սաստկութեամբ սառնամանեաց թուէր պատեալ, և ասէին զոգցես յերկրին Հայկազանց զայս լինել: Եւ ի նայել իմ յերկարագոյնս ի լեռան՝ կին ոմն ծիրանազգեստ, երկնագոյն ունելով զիրեաւ տեռ, նստեալ երեցաւ ի ծայրի այնպիսոյ բարձրութեան, աշեղ, բարձրահասակ և կարմրաշտ, երկանց ըմբռնեալ ցաւովք: Եւ ի յերկարագոյնս նայել իմ յայնպիսի երևումն և ի հիացման լինել՝ ծնաւ յանկարծ կինն երիտ կատարեալս ի դիցազանց հասակաւ և բնութեամբ: Առաջինն զերանսն ածեալ ի վերայ առիժու՝ սլանայր յարեմուտս, և երկրորդն ի վերայ ընծու՝ ի հիւսիսի հայելով, իսկ երրորդն զվիրապ անարի սանձեալ՝ ի մերոյս վերայ շահատակեալ յարձակէր տէրութեանս:

Եւ ի մէջ խառնից այսպիսեաց երազոց, թուէր ինձ կալ ի վերայ տանեաց իմոց արթունեացս, և զնոյն ինքն վերին երեսս յարկացս տեսանել զեղեցիկք և բազմազունիք զարդարեալ շատրուանօք, և զպսակողան մեր զդիւն հրաշատեսիկ տեսլամք ի վերայ կացեալս և զիտ ձեօք հանդերձ պատուել զնոսա զհիւք և խնկովք: Եւ յանկարծ ի վեր նայեցեալ, զայն որ ի վերայ վիրշապին հեծնալ էր այր, արծուոյ իմն արդարեւ ուլացեալ թևովք տեսի յարձակեալ: Եր մօտ հասեալ՝ խորհէր կործանել զդիւն: Իսկ ես Աժդահակ խտրոց ընդ մէջ անկեալ՝ յիտ զայնպիսի ընկալայ զյարձակումն, մարտ ընդ սթանշելույն առնելով դիցազնին: Եւ նախ ի տէգ նիզակաց զմարմինս երկաթանշիւրոցս յօշելով, վտակս արեան ի վայր հոսեցուցաք, և զարեզակնատես երեսս ապարանիցս արեան հոսեալ ցուցաք ծով: Այսպէս և զկնի այլովք զինուք ժամո ոչ սակաւս՝...»

1 Տե՛ս Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1913, էջ 76—76:

Ինչպես տեսնում ենք, բազմաթիվ նմանություններ կան Վահագնի ծնունդի հետ. «ծիրանի ծովն» այստեղ դարձել է «ծիրանագգեստ կին», որև ժողովրդական պատկերացմամբ բացատրվում է նրանով, թե ամպրոպից առաջ երկինքն այդ գույնն է ընդունում: Պատահականություն չեն նաև «կապոյտ» և «կարմրայտ» որոշիչները, որոնցից մեկը երկնքի նկարագրությունն է, իսկ մյուսն աղբյուրում է «կարմրիկ եղեգնիկ հետ»: Ապա հանդիպում ենք այն մտքին, որ երկունքի ցավը բռնել էր ողջ երկինքը: Պակաս կարևոր չէ «գեղեցիկ» և «բազմաթիվ» շատրվանների նկարագրությունը, որ նույնպես ուղղակիորեն կապվում է ամպրոպի և տեղատարափ անձրևի հետ: Բայց հատուկ ուշադրություն է արժանի «ի տէգ նիզակաց» կապակցությունը, որ փաստացի ապացույցն է Աբելյանի տեսականորեն արված հետևության՝ Վահագնը ամպրոպի աստվածն էր, և այստեղ մենք նրան տեսնում ենք շանթեր արձակելիս, որի հետևանքով հոսում են «վտակա արևան», որ դարձյալ անձրևի նկարագրությունն են:

Այլ այլ հետաքրքրական հանգամանք. վերոհիշյալ հատվածը թարգմանելիս թե՛ հորեն Ստեփանն, թե՛ Ստեփան Մալխասյանցն անհասկանալի են համարել «բերգակնատես երես» արտահայտությունը: Մենք հակված ենք կարծելու, որ բնագրում աղճատում կա: Ամենայն հավանականությամբ դիտարկվող արտահայտությունը պիտի առնչվեր Վահագնին՝ (ինչո՞ւ հատկապես Վահագնին և ոչ Տիգրանին. արդյո՞ք երազում հանդես եկող, վիշապին սանձած դուցազունը Տիգրանը չէր կարող լինել: Այս առիթով բավական է հիշել, որ ծնվողները Լեռքն էին):

Դժվար չէ կռահել, որ «երկրի բարձրություն և սառնամանիքով պատած գագաթ ունեցող» լեռն Արարատն է: Խորհնացու վկայությամբ լուկ հաղթանակից հետո է Տիգրանը Մասիսի ստորոտում բնակեցնում մարերին: Աժդահակի կարծեցյալ ապարանքը ժողովրդական դիցաբանություն համաձայն հենց այստեղ պիտի լիներ, ուր եղել էր մարերի արքան երազում:

Այժմ, մի պահ մոռանանք ներկայացված հատվածի գույնի մասին և կրկին անգամ անդրադառնանք Վահագնի ծննդի կապակցությամբ հնչած այն մտքին, որ դուցազունը ծընվելու պես վազում է Հայաստանը կործանել ցանկացող վիշապների դեմ մարտնչելու: Հարց է առաջնում. ո՞ւմ դեմ պիտի մարտնչեր Վահագնը, եթե գերագույն վիշապը արդեն սպանված էր: Խորհնացին այսպես է նկարագրում Տիգրանի և Աժդահակի կռիվը:

«Բայց գովեմ զքաջ նահատակն իմ և զնիզակաւորն և զամենեկն բոլոր անդամովք համեմատն և ի գեղեցկութիւն հասակի աւարտեալ. քանզի առոյգ, ամենայնիւ ըստ իրեարս պատշաճեալ, և ուժով ոչ զոք ունելով իւր զոյգ: Եւ զի՞ երկայնեմ զբանս. քանզի ի լինել մարտին նիզակաւ օրինակ իմն՝ որպէս զչուր հերձեալ զերկաթի ամուր հանդերձն՝ շամփրէ զԱժդահակ յընդարձակ տէգ նիզակին, և յամփոփել միւսանկամ զձեռնն՝ արտաքս զկէս մասն թոքոցն հանդերձ զինուն ի դուրս բերէ: Բայց մարտն էր սքանչելի. զի քաջք դիպեալ քաջաց՝ ոչ վաղձաղակի թիկունս ի միմեանց դարձուցին. վասն որոյ յերկարեալ քարշէր գործ պատերազմին մինչև ի ժամ ձիգս: Իսկ վախճան գործոյն առնէր մահն Աժդահակայ. և այսպիսի դիպուածս ի բարեբախտութիւն յաւելեալ՝ փառս հաճախէր Տիգրանայ»: Ինչպես տեսնում ենք, Տիգրանի անունը միայն վերջում է հիշատակված. թե Աժդահակի սպանությունը նոր փառք է ավելացնում Տիգրանին: Անշուշտ, այս հաղթությունը երկրպագության արժանի էր, սակայն պարտադիր չէ, որ քաջամարտիկը հատկապես արքան լինել. նույն բանը կարող էր անել և նրա որդիներից մեկը, ու դարձյալ փառքի իր բաժինը պիտի ստանար արքան: Իսկ «զքաջ նահատակն և նիզակաւորն» կապակցությունը, թերևս, հատկանշական է Վահագնին, ուր նիզակը շանթն է մարմնավորում: Իսկ «որպէս զչուր հերձեալ զերկաթի ամուր հանդերձն» արտահայտությունը ոչ միայն գեղեցիկ է, այլև խորհրդանշական: Բայց Խորհնացին իսպառ վերջ է դնում բոլոր հավանական կասկածներին. «Այսպէս և բազումք անուանեալք Տիգրան, մի է և միայնակ սա ի Հայկազանցս, որ զԱժդահակ սպան և զտուն նորս ի գերութիւն վարեաց...»: Սակայն մենք ա՞յս խոսքերը պիտի ավելի կարևոր համարենք, թե՞ Վահագնի մասին ասվածը. «Յետ որոյ և ընդ վիշապաց ասէին յերգին կուռել նմա և յաղթել...»: չէ՞ որ վիշապներն արդեն գերեզմարված էին: Ի՞նչու չէ, որ Աբելյանը հակված չէ հաղթության զափ-

2 Տե՛ս Մովսէս Խորենացի, Հայոք պատմութիւն (աշխարհաբար թարգմաննց և լուսաբաննց Խորէն եպ. Ստեփանէ), Բ տպագրութիւն, Ս. Պետերբուրգ, 1898, էջ 62: Հմմտ. Մովսէս Խորենացի, Պատմություն հայոց (թարգմ., ներածությունը և ծանոթագրություններն Ստեփան Մալխասյանցի), Երևան, 1968, էջ 113:

3 Նույն տեղեկում՝ համապատասխանաբար՝ ծան. 150 և ծան. 57:

4 Այս առթիվ տե՛ս Մ. Աբելյան, Երկեր, հ. Ա, Երևան, 1966, էջ 74—75:

5 Տե՛ս Մովսէս Խորենացի, Պատմություն հայոց, Քիֆլիս, 1913, էջ 82:

6 Անդ, էջ 85:

7 Անդ, էջ 86:

ներերը Տիգրանին շնորհելու. «Տիգրանի տեղ սկզբնապես ամպրոպային աստվածը եղած պիտի լինի»⁸:

Մատնանշված հատվածներում հանդիպում ենք ժողովրդական հավատքի կազմավորման դեռևս բյուրեղային օրինակների: Ամպրոպի աստվածությունը տակավին բաժանված չէ բարի և չար ուժերի, այլ հանդես է գալիս միասնաբար՝ Վահագնը վիշապի վրա է, ինչպես նախնական շրջանում արևի աստվածն էր առյուծին հեծնած, մինչև նրա հետ մենամարտելը: Ի դեպ՝ այս կապակցությամբ հարկ է հիշել, որ կարմրայտ կնոջ ծնած առաջին դուստրուհուհու հենց առյուծին սանձածն էր: Այսինքն, եթե համարենք, որ վերջին ծնվածը Վահագնն էր, և թվարկումն էլ արված է նույն հերթականությամբ, ինչ «Վահագնի ծնունդի» մեջ, ապա կարելի է ասել, թե Բարև այստեղ արևի աստվածությունն է խորհրդանշում: Հեղհանրապետ առասպելական կամ իրական կենդանու հեծնած աստվածները մեծ թիվ են կազմում հեթանոսական կրոններում: Անտարակույս Տիրանը (գոնե վերապահությամբ կարող ենք կիրառել այս անունը) ևս ինչ-որ ուժերի մարմնավորումն է:

Г. А. МАДОНН—О легенде Ваагна. В статье, собирательно рассмотрев все упоминания о языческом божестве Ваагне, автор приходит к выводу, что основные черты характера Ваагна объясняются с помощью сравнительной мифологии. Сведения Хоренаци доказывают, что Ваагн был именно божеством грома и не олицетворял ни солнце, ни бога войны. Автор утверждает, что один из приведенных отрывков является как бы альтернативным вариантом известного «Рождества Ваагна». Рассматриваются и некоторые вопросы, связанные с верой древних армян.

⁸ Մ. Արեղյան, Երկեր, հ. Ա, Երևան, 1966, էջ 138: